

30876

4.4

Ա Դ Օ Թ Յ Ք

ԸՆՑԱՆԵԿԱՆ ԵՒ ԱՐԱՆՉԱՆԵԿԱՆ  
ԳՐՔՈԹԿԻՆ

Յ Ե Ւ Ե Լ Ո Ւ Ծ Ւ

30876



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե . Յ . ՄԻՆԱՍԵԱՆ

Կ . ՊՕԼԻՍ

ԱՍՏԱ ԱԼԹԲ ՇԱՄԻԼ ԽԵՆ ԹԻԻ 5

1870

Էռ-ՏՐ -

ԱՅՏՐ և ԱՅԻ -

Կերպութիւն Քայլոց  
ուսուցչ Թիւ, Ա. Տ. Ը.

## Ա Դ Օ Թ Ք

ՀՆՑԱՆԵԿԱՆ ԵՒ ԱՌԱՆՉԱԿԱՆ  
ԳՐՑՈՅԿԻՆ

Յ Ա Խ Ե Լ Ա Խ Ա Ֆ

—0—

## Ա Դ Օ Թ Ք

ԳՐԻՍՑՈՄԻ ՍԵՐԻ ԶԳԱՅՈՂԻ

Սկրելի Յիսուս, քեզի կու գամի խեղճ  
մեղաւորմը, սակայն քու սիրոյդ համար  
գոհանալու փափաքով. ես տկար եմ,  
բայց տուր որ Սուրբ Հոգիիդ օդնու-  
թեամբը կարող ըլլամ ընդունելի կեր-  
պով իմ շնորհակալութիւնս մատուցանել  
Բայց ի՞նչպէս կրնամ վայելչապէս յի-  
շել քու ինձի ըրած ողորմութիւններդ :  
Մանկութենէս ՚ի վեր զիս օրհնած ես

առատապէս . ինծի տուած եօ Սուրբ  
Գրքերդ որոնք կրնան իմաստուն ընել  
զիս փրկուելու , մինչդեռ միլիոնաւոր  
մեղաւորներ կան աշխարհիս մէջ որոնք  
չեն դիտեր թէ իրենց համար մեռար :  
Փանի որ անհոգութեամբ կը քալէի մա-  
հուան ճամբուն մէջ քեզ մոռնալով՝ Սուրբ  
Հոգիդ խրկելով սորվեցուցիր ինծի թէ  
կորսուած եմ . և երբ մեղքերս տեսայ  
լեռան մը պէս , նոյն օրհնեալ Հոգին  
յայտնեց ինծի աս քաղցր ճշմարտու-  
թիւնը թէ Յիսուս մեռաւ զիս իմ մեղ-  
քերէս փրկելու : Եւ հիմա մեղքերս նե-  
րուած են , և ես երկինքին ժառանդաւոր  
եմ , քանզի , սիրելի Յիսուս , դուն ինծի  
համար փրկութիւն պատրաստած ես , և  
ես ի՞նչպէս կրնամ չգոհանալ քեզմէ .  
եթէ ես լուռ կենամ , քարերը պիտի ա-  
զագակեն :

Երբ մոլար ոչխարի պէս քու ճամբա-

ներէդ կը խոսազիմ ,  
վիւ , կը փնտռես զիս  
նորդես որ նորէն շն-  
քալեմ . անանկ որ շատ ա-  
պուիմ շնորհակալութեամբ  
«Հոգիս կը նորոգ է » :

Օրէ օր ճանչցուր ինծի քու զարմա-  
նակի սէրդ , և իմ մեծ ուրախութիւնս  
թող ըլլայ խեղճ մեղաւորներուն պատ-  
մել թէ ո՛րշափ պատուական Փրկիչ մը  
ունէմ , և հրաւիրեմ զանոնք որ քեզի  
գալով՝ իրենք ալ քու սէրդ վայելեն հի-  
մա և յաւիտեանս . Ամէն :

- 1 Ով Տէր Յիսուս , քեզ կը սիրեմ ,  
Քանզի քու սէրդ շատ քաղցըը է .  
Ես բարձր ճայնով պիտի երգեմ ,  
Բոլոր աշխարհըս թողլըսէ :
- 2 Այս , քաղցր ես հոգւոյս իմին ,  
Յոյս , փրկութիւն , կեանք ես ինծի .

զոհարք անդին,  
շին փոշի:

Արհքդ սրբին վրայ, Տէր,  
անք տըւող հոտ կը բւրէ.  
Ելժակէ ամէն ցաւեր,  
Բոլոր իմ անձս կը նորոդէ:

- 4 Ոչ նեղութիւնք, ոչ հալածանք,  
Իս քու սէրէդ կրնան զատել.  
Ու ոչ ալ մահ և ոչ ալ կեանք,  
Իս քու անձէդ կրնան բաժնել:
- 5 Պիտի պատմեմ սէրն մեծ Փրկչիս,  
Մինչև վերջին շունչս ալ հատնի.  
Յայնժամ, օրհնեալ Փրկիչ, հողիս  
Քու սուրբ գրկիդ մէջ թող հանդչի:

### ԲԵՆՑԵՐԿԵՑԼԵՐՈՒ ԱՂԹՔ

Ով ամենողօրմ Տէր մեր, թէւ դուն  
երկնից բարձրութեան մէջ քերովբէից

բարձր գահին վրայ կը նստիս, բայց  
.քու անսուտ խոստումներովդ վատա-  
հացուցած ես մեզ, թէ մեզի հետ պիտի  
ըլլաս, երբ անկեղծ սրտով և ճշմարիտ  
հաւատքով քեզ կը մինտուենք: Արդա-  
րեւ, չայր մեր, մեր վիճակը խիստ  
սոսրին է, և մենք դատապարտեալ  
դիրքի մը մէջ ենք. ուստի չենք հա-  
մարձակիր քու սուրբ երեսդ մինտուե-  
լու. բայց ո՛հ, Տէր, ստոյդ համոզուած-  
ենք, թէ մեր ներկայ կարօտութիւննե-  
րը միայն քեզմով կընանք լեցընել:  
Տէր Աստուած մեր, կը հաւատանք թէ  
քու չնորհքդ ամէն կարգի եւ վիճակի  
մարդոց վրայ խիստ սքանչելի փոփո-  
խութիւններ կընայ ընել. ուստի խո-  
նարհութեամբ կը խնդրենք քեզմէ որ  
մեզի հետ ըլլաս, որպէս զի մեր աս-  
նախատելի բանտարկութիւնը մեր հո-  
գեւոր արթնութեան և զգաստութեանը

առիթ ըլլայ։ Աս տունը որ օրինազանց-  
ներուն դատապարտութեանը համար  
սահմանուած է՝ չնորհէ որ մեզի ապաշ-  
խարութեան, զղջման եւ ամէն աե-  
սակ հոգեւոր խորհրդածութեան կայան  
մը ըլլայ։ Կը խոստովանինք թէ մեր  
վատթար բնութիւնը յաւէտ ինքզինքը  
արդարացընելով աս դատապարտու-  
թիւնը իրաւացի չի համարիր, բայց շը-  
նորհէ որ զգանք թէ մեր ամէն օրուան  
օրինազանցութիւններուն համար առկէ  
հազարապատիկ աւելի դատապարտու-  
թեան եւ նախատանաց արժանի ենք։  
Նաև չնորհէ մեզի, Հայր մեր, որ  
զգանք թէ ասիկայ մեր օրինազան-  
ցութեան հետեւութեանը ստուերն է.  
և օգնէ մեզի քու ոզորմութեամբդ որ  
մենք անմիջապէս ապաշխարելով ապա-  
գայ սոսկալի չարիքներէն ազատ մնանք։  
Եթէ երկրաւոր մարդոց ՚ի հեռուստ մեր

վրայ ունեցած աղօտ դիտողութիւնը  
մեզ աս դատապարտութեան մատնեց,  
ո՞հ, ո՞րչափ մեծ պիտի ըլլայ մեր դա-  
տապարտութիւնը, երբ ամենուրեք և  
ամենատես աչքեր ունեցող Սուրբիդ-  
արդարութեան ատեանը դատուելու  
կայնինք։ Անիկայ ոչ միայն մեր վար-  
քը, հապա մեր սիրոն ու երիկա-  
մունքն ալ պիտի քննէ, և երբ պա-  
կաս կը դտնուինք, մեզ պիտի մատնէ  
մշտնչենական դատապարտութեան, ո-  
րուն որդը չի մեռնիր եւ կրակը չի մա-  
րեր յափուեան։ Ուրեմն չնորհէ, Տէր  
մեր, որ աս թեթև և ժամնակաւոր  
պատիժը իբրև չնորհաց միջոց մը մեզ  
զգուշացընէ, որ հանդերձեալ կենաց  
դատապարտութենէն ազատուելու հա-  
մար նախապատրաստութիւններ տեսնե-  
լու փութանք։ Նաև չնորհէ որ մեզի  
համար սահմանուած պատիժը համբե-

ըութեամբ կրելով, քեզի՝ նախախնաս-  
մող՝ և մեր զգաստութեանը համար  
դրուած օրէնքին դէմ տրտնջելու չը  
յանդդնինք. ողորմէ մեզի որ յետ այ-  
սորիկ բարի կենյաղավարութեամբ մը  
ապրելով՝ փոխանակ անդուշութեամբ  
մեր անձին թշուառութեան և մեր գեր-  
դաստանին ու պարագայից նախատա-  
նաց պատճառ ըլլալու, բարի եւ սուրբ  
վարքով մը աշխարհիս լոյսն ու աղը  
ըլլանք: Թող մենք քու ծառաներուդ  
Պօղոսին ու Նիղային պէս մեր բան-  
տարկութեան ժամերը աղօթքով, եր-  
գաբանութեամբ, և սուրբ խորհրդա-  
ծութիւններով անցընենք: Աս ամէն  
բաները քու միածին որդւոյդ Յիսուս  
Քրիստոսի անունովը կը խնդրենք քեզ-  
մէ. Ամէն:

## ԻՆՔԶԻՆՔ ԸՆԵՑՈՐԾՆԻ ՊԱՇՏՈՆԻՆ ՆԱԽԵՐԱՂԻՆ ԸԼՈԹՔԸ

Ով ամենագէտ Աստուած, աս նշա-  
նաւոր կէտիս ահով ու գողով կը ներ-  
կայանամ քու ամենասուրբ աթոռիդ  
առջեր՝ քեզմէ շնորհք և օդնութիւն  
խնդրելու:

Ով Տէր, ես ո՞վ եմ, եւ իմ հօրս տու-  
նը ի՞նչ է որ զիս մինչև հօս բերիր. ես  
ի՞նչ արժանաւորութիւն ունիմ Աւե-  
տարանին բարձր պաշտօնը իմ վրաս  
առնելու, քանի որ իմ բոլոր կեանքս  
քեզի դէմ ապստամբութիւն եղած է:  
Ես ի՞նչպէս կրնամ մեղաւորներ մեղ-  
քէ զգուշացնել, քանի որ ես շատ ան-  
գամ մեղքի մէջ կը դտիսուիմ: Ի՞նչպէս  
կրնամ քու հօտդ հովուել, քանի որ ես  
շատ անգամ կը մոլորիմ: Տէր, աս պաշ-  
տօնը՝ մեծ, և անոր հետ կապուած պա-

տասխանատուութիւնները խիստ ահա-  
ւոր են, ու ես չնչին որդ մը, հող ու  
մոխիլք արարած մըն եմ. ի՞նչպէս կրնամ  
համարձակիլ առանկ փառաւոր և ինծ-  
մէ անհունապէս բարձր պաշտօնի մը  
ձեռք զարնել: Բայց զիտեմ որ դուն  
ամէն բան իմաստութեամբ կը կարգա-  
դրես, և քու ամենաբարի նախախնամու-  
թեամբ է որ զիս աս պաշտօնին կը  
կանչես. ուստի ես ալ իմ բոլոր տկա-  
րութիւններս և անարժանութիւնս խոս-  
տովանելով կը համարձակիմ քու օդնու-  
թեամբդ ըսելու, «Ահա՛ ես, Տէր, զիս  
խրկէ»: Տկար եմ, տգէտ եմ, յիմար  
եմ, մեղքի ենթակայ եմ, բայց ա՛ռ զիս  
քու ձեռքդ իրեւ մուրճ մը շատ ապա-  
ռաժ սրտեր կոտրուելու և շատ մեղա-  
ւորներ երկնից ճամբան առաջնորդելու:

Բայց որպէս զի յաջողութիւն գտնեմ,  
զիտեմ որ հարկ է ինծի անձնուրաց,

գործունեայ, ջերմեռանդ և անյիշաչար  
ըլլալ. հիմա որ ինքոինքս քու օդնու-  
թեամբդ աս պաշտօնին կը նուիրեմ,  
կուխտեմ որ ասանկ ըլլամ: Բոլոր իմ  
անձնական օդուտս, հանդիսուս պա-  
տիւս և համբաւս մոռնալով՝ կ'որոշեմ  
«Ուրիշ բան մը չգիտնալ՝ բայց միայն  
Տէր Յիսուս Քրիստոս և ան ալ խաչը ե-  
լած»: Ընդունէ զիս, ով Տէր, և իմ  
աս ուխտիս և որոշմանս համեմատ քա-  
լելու համար՝ զիշեր և ցորեկ քու օդ-  
նութիւնդ ինձմէ ետ մի՛ քաշեր:

Ով Սուրբ Հոգի, դուն որ հովիւններ՝  
մարդարէ, և ձկնորսներ առաքեալ ը-  
րիր, հիմա քու շնորհքովդ եկուր ու իմ  
հետս եղիր և զիս աս ուրբ պաշտօնին  
յարմարցուր: Սրբէ ու մաքրէ զիս, իմ  
բոլոր պակսութիւններս ուզդէ, և ինչ-  
պէս մէկը ըլլալ որ կը վայլէ ինձի՝ ա-  
նանկ ըրէ: Դուն իմ ձեռքերս վեր բռնէ

որ կարող ըլլամսատանային և անոր զօր-  
քերուն դէմ դնելու : Լեզուս , ձեռքե-  
րըս , ոտքերս և բոլոր կարողութիւններս  
քու կամքիդ համեմատ շարժէ , որ հա-  
զարաւոր մեղաւորաց քեզի դառնալուն  
միջոց ըլլամ : Եւ եթէ ինծի երկար կեանք  
պարզեցս , տուր որ քու տաճարիդ հա-  
մար շատ պատուական քարեր և զարդեր  
պատրաստելու կարող ըլլամ : Եւ երբ աս  
աշխարհէս զիս կանչելու ըլլաս , ո՛վ Տէր ,  
տուր որ կարող ըլլամ շատերը հետո  
քերելով՝ ըսել , Ահա' , ես և անոնք որ  
դուն ինծի տուիր . ամէնքս մէկտեղ օրհ-  
նենք քու ամենասուրբ Երրորդութիւնդ  
յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

1 Օդին մէջ լուիկ , բայց ազդու ձայն մը կայ ,  
երբ խաղանք ականչնուս կը հընչէ .  
Առառանց , թէ և մենք չենք գիտեր , ան կու զայ.  
Կէս օրին , իրեկունն ալ մեր շուրջը կըլլայ .  
«Այսօր այդիիս մէջ գործէ » ,  
«Այսօր այդիիս մէջ գործէ » :

2 Եւ այս ձայնն ուղղապէս երկինքէն իջնելով  
Մեզ , ուր որ թափառ ինք , կը գտնէ .  
Թէ դաշտի թէ քաղքի մէջ մեզի հասնելով ,  
Թէ լսունք և թէ ո՛չ , անդադար գոչելով .  
«Այսօր այդիիս մէջ գործէ » ,  
«Այսօր այդիիս մէջ գործէ » :

3 Ան մեր Հայրն է որ մեզ յոյժ սիրով կը կանչէ .  
Իր ձայնին հնացանդ ըլլանք մննք .  
Ընդադար օրհնութիւն իր ձեռքէն մեզ կիցնէ .  
Մենք , ուրեմն , իր սիրոյն նուերուած 'ի սրտէ ,  
Սյաօր այդիին մէջ գործենք .  
Այսօր այդիին մէջ գործենք :

« ԾՈՐԵԳԱՀՈՒԹԵԱՆ ՈՐ ՈՐՈՇԵՑԷԼՔ » :

Յուլ . Ա . 14 :

Ծոմապահը իր նպատակին հասցնելու  
համար քանի մը զգուշութիւններ , և ա-  
զօթք մը :

1. Որչափ որ կարելի է՝ մեր ամէն օ-  
րուան գործքերէն ետ կենալու ենք :

2. Կերակուրներէ և խմելիքներէ ետ  
կենալու ենք : Բայց ան օրուան նպա-

տակին վրայ չխորհելով կերակուր չուտելը ծոմ պահել չէ:

3. Ինչ նպատակի համար որ ծոմ պիտի պահենք, նոյն նպատակին նկատմամբ յաճախ խորհելու եւ աղօթելու ենք, մանաւանդ մեր մեղքերուն վրայ:

4. Օգտակար կ'ըլլայ ծոմապահին նաև Սուրբ Գրոց այն մասերը կարդալ, որոնց մէջ կ'տեսնուի նախնի հաւատացելոց զանազան նպատակներու համար ծոմապահութեամբ եւ աղօթքով Աստուծոյ մօտենալը:

Աս տեղերը դիւրաւ գտնելու համար, տես՝ «Հաւաքումն վկայութեանց Սուրբ Գրոց» կոչուած դիրքին մէջ, ծոմապահութեան վրայ:

### ԺԱՄՊԳԵՀԻՆ ԱՂՕԹՔԸ

Ով ամէնողորմ, զթած և մարդասէր Հայր, շնորհակալ եմքենէ՝ որ քու ան-

հուն ողորմութեամբդ մինչ ցայեմ քու անարժան ծառադ ողջ և առողջ պահեցիր ու պաշտպանեցիր. նաև իմ պարտաւորութիւնս ճանչըլնելով ծոմով յեւ աղօթքով քու շնորհաց աթոռիդ առջել ներկայանալու արտօնութիւն շնորհեցիր:

Ով Սուրբ Հայր, կը զդամ, կը խոստովանիմ ալ՝ թէ ես խեղճ մեղաւոր մընեմ, արդարապէս յաւիտենական պատժոյ բժանի. վասն որոյ, ոչ միայն մէկ օր, այլ ամէն օր, աղօթքով իմ վիճակիս վրայ խորհելու, ու իմ յաւիտենական փրկութիւնս գործելու պարտական եմ: Սակայն, ով Տէր, ո՛չչափ քիչ կը խորհիմ իմ յաւիտենական վիճակիս վրայ, և ո՞րչափ պաղեմ. սիրոս քարի պէս է, չի շարժիր. մահուան քունը զիս պատած է. կորսուեան փոսը իյնալու վտանգին մէջն եմ. քիչ կը մնայ որ Պետրոսին պէս

ընկղմիմ։ Ով մարդասէր Յիսուս, քու  
սիրոյ ձեռքերդ երկնցուր ու բռնէ կոր-  
սուելու վրայ եղող մեղաւորս։ Այս,  
ով սիրելի Փրկիչ, եթէ քու ամենակա-  
րող բազուկներդ երկնցընելով զիս չըլու-  
նես, անշուշտ պիտի կորսուիմ, քանզի  
ես աշխարհասէր մը եղած եմ, երկրա-  
ւոր վայելքները երկնաւորներէն նախա-  
պատիւ կը սեպեմ։ Ահ, Տէր, «Վերի  
բաները փնտռեցէք», «Աշխարհը մի՛  
սիրէք», հրամանները առած եմ, սա-  
կայն իմ բնութիւնս ատոնց հակառակը  
կը գործէ։

Ով Սուրբ Աստուած, գուն ըսած ես  
թէ «Ես մեղաւորին կորսուիլ չեմու-  
զեր»։ Ես ալ մեղաւոր մը, մեծ մեղա-  
ւոր մըն եմ, անշուշտ իմ ալ կորսուիլս  
չես ուզեր. ուստի ողորմէ ինձի ու զիս  
քուկդը ըրէ, ու մի թողուր որ աշխարհը  
զիս կը։

Գիտեմ որ դուն իմ վրկութիւնս կ'ու-  
զես, քանզի քու Միածին որդիդ բուն  
խակ ասոր համար աշխարհք խրկեցիր. և  
քու կենաց խօսքերդ ալ իմ հասկցած  
լեզուովս ձրիապէս իմ ձեռքս տուիր, և  
ան ինձի ճանչցուց իմ սիրելի Փրկիչս։  
Քու սուրբ խօսքիդ հետ ինձի սիրելի պաշ-  
տօնեալ մըն ալ տուիր, որ զանիկայ կար-  
դալով կը բացատրէ, ու միշտ կը խրատէ,  
կը յորդորէ ու քու օրհնեալ կամքդ ինձի  
կը սորվեցընէ։ Սակայն աւազ, ով Տէր,  
որ ես քու ազգարարութեան ձայնիդ  
մինչեւ հիմա անհնազանդութիւն ըրած  
ըլլալով՝ Եսսաւին պէս իմ օրհնութիւն-  
ներս կորսնցուցի, Երուսաղէմին պէս  
այցելութեանդ ատեններուն յարդը  
չդիտնալով, իմ անմահ հոգւոյս աւելու-  
մը գործեցի։ Եթէ աս իմ անհոգ և ան-  
հնազանդ վիճակիս մէջ իմ կենացս թե-  
ւը կտրելով զիս յաւիտենական դատա-

պարտութեան մատնէիր , իրաւունք և  
արդարութիւն ըրած կըլլայիր : Սակայն  
գոհութիւն քեզի՝ որ խեղճ մեղաւորիս  
ողորմելով՝ ապաշխարութեան և զղման  
ժամանակ շնորհեցիր : Եւ կը հաւատամ  
որ քու սիրելի Որդիդ՝ հանուր մարդկա-  
յին սեռին Փրկիչը և Բարեխօսը՝ մեղա-  
ւորիս համար անդադար բարեխօսու-  
թիւն ընելով ըստածէ . « Հայր՝ աս տարի  
ալ համբերէ՝ ուռցէ ապաշխարէ ու պը-  
տուղ տայ » : Բայց կը խոստովանիմ որ  
քու ուղածիդ պէս ապաշխարութեան  
արժանաւոր պտուղ չբերելով՝ հեռա-  
ցայ քեզմէ և օտարացայ խոստմանքին  
ուխտերէն :

Եւ արդ՝ կը փափաքիմ որ այսուհետե-  
խոնարհութեամբ և հեղութեամբ քեզի  
ծառայեմ , ու քու փառքիդ համար ապ-  
րիմ : Ավ դառն Աստուծոյ , քու հրաւէ-  
րիդ համեմատ յոդնած ու բեռնաւո-

րած խեղճ մեղաւորս քեզի կու գամ՝  
որ ըստիր , « Ինծի եկէք » , « Ավ որ ինծի  
գայ՝ բնաւ դուրս պիտի չհանեմ » : Բայց ,  
ով սիրելի Փրկիչ , գուն գիտես իմ տը-  
կարութիւնս . թէ որ Հայրը չքաշէ , ես  
ինչպէս կընամ քեզի գալ : Ավ Հայր ,  
իմ ձեռքերէս բանէ , ու զիս Քրիստոսի  
խաչին տակը տար , որ իմ մեղքերուս  
թողութիւնը գտնեմ : քանզի ուրիշ տեղ  
փրկութիւն չկայ ինծի : Պուն գիտես իմ  
սրախ վիճակը . ողորմէ ինծի՝ ու Տէր  
Յիսուս Քրիստոսի անունովը խրկէ քու  
Սուրբ Հոգիդ՝ որ իմ չար սիրտս փոխէ  
ու նոր մարդ մը ընելով , երինային թա-  
գաւորութեանդ յարմարյընէ :

Հայր գթած , այսօր ինչ օր հնութիւն-  
ներ որ ինծի համար խոդքեցի , նոյն օրհ-  
նութիւնները բոջոր իմ վիճակէս եղող  
խեղճ մեղսակիցներուս համար ալ կը  
խոդքեմ :

Օրհնէ ան ամէնը՝ որոնց համար որ  
պարտական եմ աղօթք ընելու . և ա-  
նոնք ու զիս արժանացուր վերջապէս  
երկնային անդրանկաց հանդիսաւոր ժո-  
ղովին ու փառքին :

Աս ամէն բաները կը խնդրեմ քու  
Միածին որդւոյդ անունովը , որուն ու  
քեզի և որտերը նորոգող Սուրբ Հո-  
գւոյդ կը վայելէ իմ վրկութեանս փառ-  
քը այժմ և միշտ . Ամէն :

- 1 Ինչու առանկ մեղքերս սիրեմ,  
Ռւնայն հաճոյք ինչու վնտուեմ.  
Երկնից , դժոխքի վրայ չըխորհիմ,  
Մոռնամ հողիս , աղօթք ձըդեմ:
- 2 Ինչու քու սուրբ խօսքերդ կարդամ,  
Եւ միշտ սորվիմ քու օրէնքներդ .  
Ինձ ի՞նչ օդուտ զանոնք ճանչնամ ,  
Զեմ կատարեր սուրբ պատուէրներդ:

Յ Կ'նչ խիստ եմ ես քարի նըման ,  
Կ'նչպէս անշահ են խորհուրդներս .  
Տէր , ողորմէ տըկարութեանս ,  
Ներէ բոլոր գործած մեղքերս :

4 Բաց ականջներս լսել քու ձայնդ ,  
Շընորհք տուր ինձ աղօթք սիրել .  
Վանդի , ով Տէր , դուն կը հաճիս  
Մեղաւորաց աղօթք լսել :

### ԲՈՐԿԵՑՈՂԻ ԸԼՈԹՔ

Ով ամենակարող Հայր , կը տեսնես  
թէ նուաստ ծառադ ինչ վիճակի մէջ է .  
անոր չոր սկրտը բարկութեան կիրքով  
լցուած ու գրգռուած է . եթէ թողում  
զանիկայ , շուտով կորսանեան մէջ պիտի  
ընկղմի : Կ'աղաշեմ , ով Տէր , նայէ և  
օգնէ ինձի և զապէ սրտիս չար կիրքը .  
Վանդի աղէկ գիտես թէ բնաւ չեմ կը ը-  
նար բարկութիւնս զսպել եթէ դուն չօդ-

ես : Պուն որ հովերն ու ծովը կը դադու ,  
Նրեցնես , կրակի զօրութիւնը կը մարես  
այսպէս ալ կարող ես իմ բարկութիւնս  
ան Իիշապէս դադրեցնել : Բարկացողը  
արդարութիւն չի գործեր , իրաւունքը  
չի փնտռեր , ընկերը իր անձին պէս չի  
սիրեր , ընտանեաց և դրացիներու հետ  
սիրով չի վարուիր , իր անձին մէջ խա-  
ղաղութիւն չունի , քեզի հաճելի և սի-  
րելի չէ . դուն այնպիսին կատես և կը  
մերժես : Անոր տեղը ոչ թէ երկինքը ,  
այլ դժոխքին անդունդն է :

Հիմս կը խոստովանմ , ով Սուրբ  
Հայր , որ նոյն վիճակին մէջն եմ . ման-  
կութենէս մինչև հիմա քու ուզո՞ծ կեր-  
պովդ կեանք մը անցուցած չեմ սիրով ու  
հեղութեամբ . եթէ շնորհքդին ինձի չհաս-  
նի , նոյն ախտին մէջ յառաջ պիտի եր-  
թամ ու կորսուիմ :

Ով խաչեալ Փրկիչ , ոզորմէ նաւաստ

ծառայիդ . ան համբերութիւնը շնորհէ  
ինձի որ դուն աշխարհի վրայ եղած ա-  
տենդ ցուցուցիր . երբ կը նախատէին ,  
կօրհնէիր . երբ կը չարշարէին , համբե-  
րութեամբ կը կրէիր . երբ կը հալածէին ,  
մէկուն սպառնալիք մը չէիր ըներ :

Կ'աղաչեմ , ով Աստուծոյ Պառը , նոյն-  
պէս ալ ինձի համբերութիւն մը շնորհէ ,  
որ երբ ուրիշները մէկ երեսիս զարնեն ,  
միւսը դարձնեմ . երբ շապիկս ուզեն ,  
վերարկուս ալ տամ . եթէ զիս հալածեն  
օրհնեմ . եթէ ստացուածքս ձեռքէս  
առնելով ուրիշ երկիր աքսորեն , համ-  
բերեմ ու ինքզինքս քեզի յանձնեմ :  
Վերցուր բարկութեան կիրքս , որ բնաւ  
հրապարակներու և որ ևէ տեղերու մէջ  
ձայնս չլսուի :

Ով Հայր , ինձի շնորհք տուր որ քեզի  
նման ըլլամ . ինչպէս որ դուն չարքուն  
ու մեղաւորներուն վրայ արեգ կը ծա-

գեցնես, Երկայնամիտ կըլլաս անոնց և  
կուտաս կերակուր, հանդերձ և կեանք,  
այսպէս ալ օդնէ ինծի, որ չարիք ընողին  
բարիք ընեմ: Ով Սուրբ Հոգի, օդնէ  
ինծի որ արելբարկութեանս վրայ մարը  
չմտնէ: Ինծի նոր սիրտ մը չնորհէ, որ  
կարող ըլլամ ամէն բանի համբերել.  
քանզի աղէկ գիտեմ թէ առանց սրտի  
փոխսութեան ոչ համբերող պիտի ըլ  
լամ և ոչ ներողամիտ, և դուն հեղերուն  
ու խոնարհներուն սրտին մէջ կը բնակիս  
զանոնք քեզի տաճար ընելու: Կ'աղա-  
չեմ, լեցուր փափաքս, խնդիրքս կատա-  
րէ. ինչպէս որ Սովորէսին, Յորին և ու-  
րիշ շատ սուրբերու համբերութիւն չնոր-  
հեցիր, այնպէս ալ ինծի պարգևէ:

Ով Աստուած, օրհնէ ան ամէնը որ  
պատճառ կըլլան զիս բարկայնելու, ա-  
նանիներուն չնորհք տուր որ բնաւ զիս  
և ուրիշները մեղքի առաջնորդելու

պատճառ չըլլան. օդնէ անոնց որ հե-  
զահոգի ըլլան ու ինքնինքնին քեզի  
յանձնեն: Իմ սիրելի Փրկչիս անունովը  
կը լսնդրեմ. Ամէն:

### ՀԱՐՍՆԵՒԹԻՒ ԵՒԾՆՁԻՆ ԵՂՋԹՔ

Ով ամենակարող Աստուած իմ, շնոր-  
հակալ եմ քեզմէ, որ աս քու մեղաւոր  
և անարժան ծառադ ողջ և առողջ պա-  
հելով՝ ասանկ արտօնութեան մը արժա-  
նացուցիր, որով կընամ խորհիլ քու մեզի  
հետ ունեցած առնչութեանդ վրայով,  
զոր սկսար մեր նախածնողացը վրայ աս  
ամուսնութեան սահմանադրութիւնը ը-  
նելովդ: Ով Տէր, ինչպէս որ քու ամէն  
կարդաղքութիւններդ բոլորովին բարի և  
ընդունուելու արժանի են, անտնկ ալ  
ասիկայ: Աւստի կը գոհանամ քեզմէ աս  
մեզի եկած օրհնութեան համար, բայց  
կ'աղաջեմ որ Սուրբ Հոգւովդ վերացնես

իմ խորհուրդներս այն տեղը՝ ուր որ իմ  
Փրկիչս է փեսան. և հարսն է Անոր ա-  
րիւնովը զնուած սուրբ Եկեղեցին։ Շը-  
նորհէ, ով Հայր, որ վերի բաները մտա-  
ծեմ, ու հասկնամթէ աս և ասոր նման  
բոլոր ուրախութիւնները անյաւոր են,  
ու ինձի պէտք եղածը միայն գուն ես  
ու վերինները։ Հաճէ ուրեմն վերի հար-  
սանեաց խորհուրդներովը զիս լեցընե-  
լու, որ անով զբաղելով հասնիմ արդա-  
րութեան պատկերու, որ քեզ  
պիրողներուն պատրաստուած է։

Աշ ինդրեմ, ով Տէր, որ յիշես աս  
նոր ամսւափները, օրէնքս անոնք, ու ա-  
սոաջնորդես որ իրենց ըրած այս ուխտին  
հաւատարիմ գտնուին։ Շնորհէ որ քու  
Սուրբ Գիշեղ կարդան, սորլին, ու ա-  
նով վսրժուած ծառայեն քեզի։ Շնորհէ  
որ սիրով բնակին իրարու հետ, և ճշմա-  
րիտ Աստուածաշութեամբ ապրելով

բարի լնտանիք մը ըլլան, ու հանդեր-  
ձելոյն քեզմէ խոստայուած պսակը լն-  
դունին, Յիշէ, Տէր, աս տանը բնակիչ-  
ները ու աս բոլոր հանդիսականները, ու  
խրկէ քու Հոգիդ՝ որ աս սահմանադրու-  
թեան մեծ գործ մը ըլլալը յիշելով քեզ  
փառաւորեն։ Առաջնորդէ որ աս ու ա-  
սոր նման ուրախութիւններով չբաւակա-  
նանանք, որ միայն ասիկա մեզի կատա-  
րեալ երշանկութիւն մը չհամարինք, որ  
բոլորովին չյարինք ասոր և պէտքի բանը  
մոռնանք, այլ յաւիտենականութեան  
համար պատրաստուելու ետևէ ըլլանք։  
Ով Սուրբ Հայր, խրկէ քու Սուրբ Հո-  
գիդ՝ որ լուսաւորէ մեր հոգինները, ու  
սորվեցնէ մեզի քու կամքիդ համեմատ  
խորհելու, խօսելու և գործելու, որպէս  
զի ասանկ պարագայ մը կարող չըլլայ  
բնաւ մեր խորհուրդները քեզմէ հեռա-  
ցընել։

Պուն, ով Յիսուս Քրիստոս, որ խոնարհութեամբ շնորհք ընելով Գալիլեայի հարսնիքը դացիր, ողորմէ մեզի ու հոսալ ներկայացիր, որ քու ուզածիդ պէս կարգադրուած՝ քու փառքիդ համար ժողվուած ըլլանք: Ավ Աստուած, բարեհաճէ առատ գթութեամբդ լսել ծառայիդ աղօթքի ձայնին, ու պատասխան շնորհել, քու միածին Որդւոյդ անհուն արժանաւորութեամբը, որուն հետ քեզի ու ամենասուրբ Հոգւոյդ կը վայելէ փառք, պատիւ ու երկրպագութիւն, յաւիտեանս յաւիտենից. Այն:

- 1 Ով քաղցր Փրկիչ, հոս դալ հաճէ,  
Որ շնորհք ըւրիր այն հարսնիքին.  
Ներկայութեամբդ, Տէր, մեզ օրհնին,  
Եղիր հոս ալ մեզ հիւր անդին:
- 2 Տէր, կը խնդրենք ձիրքդ օրհնութեան  
Աս երկուքին վըրայ հանդչին.

Եւ բարութիւնդ որ անվախճան,  
Երջանկացնէ առա և յերկին:

- 3 Տէր բարերար առատ շնորհքով  
Լեցուր անոնց ըշտեմարան  
Առատութեամբ, ողջութենով.  
Տուր սիրո գովիչ քոյդ բարութեան:

- 4 Այս կեանքն է ալետանջ մէկ ծով,  
Փոթորկալից վըտանգաւոր.  
Թող միշտ ապրին մէկ սուրբ վարքով,  
Մինչև համնին յերկինս անդորր:

- 5 Երբ մահը դայ զատէ զանոնիք,  
Զայս կապն քակէ իւր ցուրտ ձեռօք,  
Թող պատկերիդ փոխուին ասոնք,  
Դարձեալ միասցին քոյին շնորհօք:

ԵՐ ԳՅՂՋ ՎԻՃԱԿԻ ԶԴՅՑՈՂԻ ԸԼՈՒՔ  
ՈՎամենսօրհնեալ և ամենաբարի Սուրբ  
Հայր, շնորհակալ եմ քենէ որ քու ան-

հուն ողորմութեամբդ խեղճ մեղաւօրիս  
ողորմելով աս իմ վտանգաւոր վիճակս  
ինծի յայտնեցիր : Ո՞րչափ շատ անդամ  
աս իմ գաղջ վիճակիս վրայով բարե-  
պաշտ քրիստոնեաներէ և մանաւանդ իմ  
պաշտօնեայէս աղդու խրատներ լուցի ,  
բայց աւազ որ անզգայաբար չէի շար-  
ժեր ու չէի հաւատար թէ ես աս վիճա-  
կին մէջն եմ : Բայց օրհնեալ ըլլայ քու  
անունդ , որ ինծի ողորմելով՝ աս իմ  
թշուառ վիճակս ինծի յայտնեցիր : Հիմա  
աղէկ կը դգամ թէ իմ վիճակս խիստ  
վտանգաւոր է , և եթէ աս վիճակէն ա-  
զատուելու հոդ չտանիմ , գունդիս բեր-  
նէդ դուրս պիտի իսկսես , քանզի դուն  
կը զզուիս գաղջ վիճակի մէջ եղողներէն ,  
և կըսես , «Երանի՛ թէ պաղ ըլլայիր՝  
կամ տաք » : Ո՞հ , Տէր , հիմա աղէկ կը  
հասկնամ թէ զիս խրատողները ի՞նչ աս-  
տիճան սէր ունին իմ վրաս , և երբ իմ

անտարբեր վիճակս կը տեսնեն , ի՞նչ աս-  
տիճան ցաւ կը զգան :

Ինչու համար ուրիշները իմ վրաս կը  
ցաւին՝ ու ես չեմ ցաւիր . երանի թէ  
ուրիշներուն իմ վրաս ունեցած սիրոյն  
չափ ես ալ ինքզինքս սիրէի ու իմ վըր-  
կութիւնս գործէի : Այս , պատճառ ու-  
նին իմ վրաս խորհելու և ցաւելու , քան-  
զի անմահ հոգի մը ունիմ , որուն համար  
Փրկիչս իր անձը տուաւ , բայց ես ան-  
հոգ ու անտարբեր կեցած եմ : Փառա-  
ւորեալ չայր , աս գաղջ վիճակս ոչ մի-  
այն ինծի վնաս է , այլ ամէն անոնց ալ՝  
որոնք զիս կը դիտեն ու ինծի հետ ա-  
ռընչութիւն ունին : Ո՞հ , արդեօք քանի՛  
անմահ հոգւոց կորստեանը պատճառ  
եղած եմ . վայ ինձ , տակաւին պիտի  
մնամ աս թշուառ վիճակիս մէջ . տա-  
կաւին պիտի ցաւցընեմ անոնք՝ որ զիս  
կը խրատեն . դուն կը զզուիս գաղջ վի-  
3

ճակէն, ես սիրելով անոր մէջ մնամ: Ով  
Տէր, ողորմէ ինծի, ազատէ զիս աս  
վտանդաւոր վիճակէն, քանզի կը զգ ամ  
թէ աս վիճակը ինծի շատ սուզի պիտի  
նստի: Ով բարեխնամ, մարդասէր Հայր,  
կը խնդրեմ որ ինծի չնորհք տաս որ  
ես այսուհետեւ մտիկ ընեմ ան ամէն  
խրատներուն, որոնք իմ փրկութեանս  
համար իբրեւ միջոց պիտի գործածես:  
Խնայէ իմ խեղճ հոգիս, ու շուտով ա-  
զատէ աս վտանդէն. ոչ միայն ինծի հա-  
մար կը խնդրեմ, այլ և անոնց համար  
որ ինծի պէս գաղջ են: Ով Սուրբ  
Հայր, թէ անոնք եւ թէ զիս շուտով  
ազատէ, որ ջերմեռանդ ու աշխոյժ  
քրիստոնեաներ ըլլանք: Մինչեւ հիմայ  
քու գործիդ զնաս տուինք. այսուհետեւ  
ջանանք անոնց տեղը լեցընելու եւ աշ-  
խարհիս լոյսն ու աղը ըլլալու: Սիրելի  
Փրկիչ, դուն գաղջին աս խրատը տը-

կր՝ «Ես քեզի խորհուրդ կուտամ, ինձ-  
մէ կրակի մէջ փորձուած ոսկի ծախու  
առ՝ որ հարստանաս, ու ճերմակ հան-  
գերձներ՝ որ հագնիս, որ քու ամօթալի  
մերկութիւնդ չերեւնայ. և աչքերդ-  
գեղ դիր՝ որ տեսնես»:

Ով Սուրբ Հայր, քու Սուրբ Հոգւոյդ  
շնորհքովը պարգևէ ինծի Քրիստոսի  
պատրաստած արդարութեան հանդեր-  
ձը՝ որ հագնելով իմ ամօթալի մեր-  
կութիւնս ծածկեմ: Նաև պարգևէ ան  
գեղը իմ աչքերուս, որ աս մութ ձորին  
մէջ չմոլորիմ, ու յաւիտեան թշուառ  
չըլլամ: Ով Տէր, ոչ թէ իմ, այլ խաչեալ  
Փրկիչն արժանաւորութիւնովը կը խըն-  
դրեմ. Ոմէն:

1 Գեղ ի՞նչ եղաւ. մի քընանար,  
Մի՛, Յովսանին պէս մի խորդար.  
Ել, արթընցիր, ով իմ հոգիս,  
Վըտանդի մէջ կը տեսնեմ զիս:

- 2 Ա.ՀԵՇ վըտանդ . մահը կու դայ ,  
 Ս.րագութեամբ կը մօտենայ ,  
 Որ լսեղծ մարմինըդ հոս ձըգէ ,  
 Քեզ ատեանին առջին հանէ :
- 3 Ա.ՀԵՇ ատեան , սուրբ ու արդար ,  
 Ողօրմութիւն չիք , չես դտնար .  
 Ա.մենագէտ , ասող չարաց ,  
 Բազմի դատել , որ էն Ա.ստուած :
- 4 Ա.ՀԵՇ Ա.ստուած , «մաշող կըրակ» ,  
 Քննող սրտից , որոց միակ  
 Խնդն է տեղեակ , վըկայ չուզեր ,  
 Վըճիռ կու տայ , ալ ետ չառներ :
- 5 Ա.ՀԵՇ վըճիռ անդառնալի ,  
 Ծոյլ քընացողն թող կորսըւի ,  
 Անյուսութեամբ դըժոխսք ձըգուկ ,  
 Մինչ յաւիտեան հոն տանջըւի :
- 6 Ուրեմն ելիր , մի յապաղիր ,  
 Փութով այն նեղ դռնէն մըտիր .

Բնաւ մի շեղիր , յառաջ վագէ ,  
 Եւ անդադար շընորհք խնդրէ :  
 ՀՅԱՂԱՐԴԻԹԻՑՆ ԱՏԵՆԻ ԱԼՈԹՔ

Ով խաչեալ Յիսուս , դուն որ իմ  
 մեղքերս քաւելու համար քու երկնային  
 փառքդ ձգելով յերկիր խոնարհեցար՝  
 տուր որ հիմա քու շնորհքովդ կարող  
 ըլլամ դգալ քու անճառելի սէրդ զոր  
 ցուցուցած ես ինձի՝ չնչին արարածիս :  
 Բայց , աւազ , որ իմ սիրոս քար է  
 ու , թէև քու կրած նեղութիւններուդ  
 և չարչարանքներուդ պատճառը բուն  
 իմ մեղքերս են , ասիկա պէտք եղածին  
 պէս չեմ զգար : Երբ պարտէզին  
 մէջ քրտինքդ արեան կաթիւներու պէս  
 կը թափէր , ի՞նչ էր պատճառը , եթէ  
 ոչ իմ աղերախտութիւնս զոր առաջուց  
 կը տեսնէիր : Փըկիչ իմ Յիսուս , ո՞վ էր  
 որ քեզ մահուան դատապարտեց և քու

փակուկ մարմինդ կապեց, ոչ թէ զին-  
ւորները և դահիճներն էին՝ այլ իմ ա-  
նօրէն մեղքերուս բազմութիւնն էր: Ո՞վ  
էր որ քու Աստուածային դէմքիդ ապ-  
տակ զարկաւ և պիղծ թուքերով ան-  
պատուեց, եթէ ոչ իմ դժնդակ մեղ-  
քերս: Ո՞հ, իմ մեղքերս եւ անօրէնու-  
թիւններս էին որ քու կուսածին մար-  
մինդ. ծեծեցին և փուշերէ պսակ քու  
երկնային ճակատիդ վրայ բոյրեցին:  
Եւ փայտէ ծանր խաչը իմ տեղս քու<sup>o</sup>  
վրադ առած երբոր լեռն 'ի վեր կ'ելլէ-  
էր, ինչո՞ւ նուաղած գետինը ինկար. չէ  
որ իմ մեղքերս ալ խաչիդ հետը մէկ-  
տեղ կը կըէիր: Ո՞ր ամբարիշտ ձեռքն  
էր որ քու սուրբ մարմինդ մերկացուց,  
քու ձեռքերդ և սուքերդ անիծեալ  
փայտին գամեց, եթէ ոչ ես ապերախտ  
մեղաւորս: Ինչո՞ւ լեռին խմեցիր, Փրկիչ  
իմ Յիսուս. իմ մեղքերուս փոխարէն

չէր. իմ պատճառով էր որ Հրեաները  
քեզ նախատեցին, ինծի համար սպան-  
նուեցար. իմ մեղքերս էին որ զինւորնե-  
րուն հետ կողդ ծակեցին: Բոլոր տան-  
ջանքներդ ինծմէ կրեցիր, ինծի համար  
մեռար, և զիս գերեզմանէն ազատելու  
համար հոն պառկեցար: Տէր Յիսուս,  
քեզի, միայն քեզի դէմ մեղանչեցի և  
քու աչքերուդ առջեւը չարութիւն ըրի:

Ու հիմա քեզմէ ՚ի զատ որո՞ւ երթամ.  
դուն ես որ ինծի համար քու կեանքդ-  
տուիր, որպէս զի ես կեանք ունենամ,  
ու զիս կը հրաւիրես որ քեզի գամի:  
Գթած Յիսուս, քու խաչիդ առջեւը ին-  
կած կ'աղաչեմ, ներէ իմ դարչեի մեղ-  
քերս որոնց վրայ բոլոր սրտով կը զբա-  
ջամ: Տուր որ այսուհետեւ աւելի ընտ-  
րեմ մեռնիլ քանթէ երբէք քեզի դէմ  
մեղանչել: Քու մահդ թող ինծի ուրա-  
խութիւն և ցնծութիւն պարդեէ. և երբ

փորձուիմ .քեզի դէմ մեղանչելու , աչ-  
քիս առջեւը բեր Գողգոթայ լեռանը վը-  
րայ փայտէն կախուած մարմինդ , և թող  
առ տեսութիւնը զիս ամէն մեղքէ ետ  
պահէ , մինչև որ , սիրելի Յիսուս , աչ-  
քովս քեզ տեսնեմ , և լեզուովս քու  
անճառելի սիրոյդ նոր երդեր երդեմ  
յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

1. Քարեղէն սիրտ , արդ զզջա ,  
Կակուզցիր խաչէն յաղթուած .  
Տես արիւնն հողին վրայ ,  
Եւ մարմինը ջախչախած .  
Մեղաւո՞ր , աս ի՞նչ ըրեր ,  
Տէրը դուն սպաննեցիր :
2. Մեղքը Տէրն սպաննեցին ,  
Գամ զարկին իր մարմինին .  
Փուշերով պըսակեցին ,  
Խոթեցին նիզակ կողին .

Իր հոգին ան զոհ ըրաւ ,  
Քու մեղացդ համար մեռաւ :

3. Արդ Փրկչին այս մահն պիտի  
Քու ողւոյդ ունա՞յն ընես .  
Իր արիւնն նորէն պիտի  
Քու ոտիցդ կոխա՞ն ընես .  
Ոչ , ով Տէր , մեղքէս զատուիմ ,  
Ընդունէ կոտրած սիրտ իմ :

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԹԵՐՊՄԱՆՈՒԾՈՒՅԹ ԱՂՅՈՒՖԻՆԵՐ

Ե . Եւանաւուան ընդունակ արքն +

Ով ցերեկուան Տէրն ու գիշերուան  
Սուեղծողը , որ ցերեկը բարեգործու-  
թեան զբօսանաց համար ըրեր , որ մեր  
անձը փրկուի , ու գիշերն ալ մեր տկա-  
րացած ընութեան հանգստութեանն  
համար : Սակայն հիմա արթնցընելով  
մեր բերանը բացիր , որ քու սուրբ՝ ա-  
հաւոր և փառաւորեալ անունդ օրհնա-

բանենք : Ընդունէ հիմա մեր աղաւանքը , և մեզի յաջողութիւն տուր որ ուղիղ հաւատքով ու առաքինասեր վարքով միշտ նոյն պաշտօնիդ մէջ արթուն ըլլանք : Եւ այս նոյն կանոնով անդադար փառաւորենք դՀայրդ՝ զՈրդիդ ու Սուրբ Հոգիդ , հիմա և միշտ ու յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Բ. Եւանք , առ Քըւուս

Ով Տէր , որ զթած ու ողորմած ես , միշտ քեզի կ'աղաջնիք , զօրացուր զմեզ որ օր ըստ օրէ մեր կրօնաւորութեանը մէջ կենանք : Թեթեւցուր , ով Տէր , անքաջցը լուծը որ մեր վրայ դրիր , որպէս զի կարող ըլլանք պատուիրանացդ մէջ մնալ , և ամէն ատեն՝ դիշեր ու ցերեկ՝ քու առջեւդ հաճելի եղածները կատարենք : Հընչտակային երդակյութեամբ զքեզ օրհնենք , գովենք , ու քեզի ա-

մենազօր Տէրութեանդ գոհութիւն և փառք մատուցանենք , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Գ. Մէաբանուին աղջիւ

Ով մարդասեր Տէր , գիշեր ցերեկ ու ամէն ժամ քեզի կ'աղաջնիք և քեզմէ կըխնդրենք : Մտիկ ըրէ մեզի , մեր փրկիչ Աստուածը . թող խոնարհի քու ականչներդ մեր խնդրուածքներուն , որ չըլլայ թէ ծառաներուդ աշխատութիւնը պարապը երթայ , այլ մեր աշխատութիւնը արդարութեան գործոյ ու աստուածպաշտութեան պտղոց կարգէն համարէ : Ընդունէ , ով Տէր , մեր աղօթքն ու երկրագութիւնը , տուր մեզի առատապէս քու ողորմութիւնդ , ծածկէ մեզ ամենազօր ձեռացդ հովանոյն տակը , զօրացուր մեզ , Տէր , Սուրբ Հոգւոյդ զօրութեամբը , եւ մեզ աշաց բիբի

պէս պահէ։ Եւ մեզ բարի նշան ըրէ  
քու սուրբ անուանդ գովեստին ու փա-  
ռաբանութեանը համար, ինչու որ ամէն  
արարածոց փառաբանութիւնը՝ ի բար-  
ձունս կը կատարուի քու փառքիդ հա-  
մար Հօրը, Որդւոյ և Սուրբ Հոգւոյդ,  
այժմ և միշտ և յաւիտեանս . Ամէն։

Դ. Անբանական աղջիւ առ Ք. Ռ. Ա. Պ.

Ով քաջ Հովիւ, ով յաւիտենական  
բարի Հովիւ, նայէ ու այցելութիւն ը-  
րէ բանաւոր հօտիդ, զոր գթութեամբ  
քովդ ժողվեցիր։ Ինչու որ, Տէր, քու  
առջևդ կեցած ենք և քեզմէ կ'ակնկա-  
լենք ողորմութիւններդ ու գթութիւն-  
ներդ։ Ամէնն ալ օրհնէ, ամէնն ալ ի-  
մաստուն ըրէ, ամէնն ալ լուսաւորէ և  
ամենուն պարգևէ երկնից արքայու-  
թիւնդ, քանզի գուն կենաց Տէրն ու  
ողորմութեանց Աստուածն ես, և քեզի

կը վայելէ վրառք, իշխանութիւն և պա-  
տիւ հիմա, միշտ և յաւիտեանս . Ամէն։

Ե. Անբանական աղջիւ

Ով երկնի ու երկրի Տէրը և բոլոր ե-  
րեւելի ու աներեւոյթ արարածոց Արա-  
րիշը։ Ամէն ժամ քեզի կը կանշենք,  
քանզի տէրութիւնդ ամէն տեղ է, ու  
թագաւորութիւնդ ամենուն վրայ կ'իշ-  
իէ։ Ծնորհէ մեզ որ միշտ արթուն ըլ-  
լանք երկիւզով քու պաշտօնիդ մէջ, որ  
միրենք զքեզ մեր բոլոր սրտովը, բոլոր  
մտքովը և բոլոր զօրութեամբը, և պա-  
հենք քու պատուիրանքներդ։ Առանց  
բարկութեան ու երկնութեան որբու-  
թեամբ ձեռքերնիս քեզի վերցընենք,  
և քեզմէ ողորմութիւն, շնորհք և ա-  
ռաքինական գործոց յաջողութիւն գըտ-  
նենք, քանզի գուն ողորմութեանց  
Աստուածն ու կենաց Տէրն ես . և քե-

զի կը վայելէ փառք, իշխանութիւն ու  
պատիւ հիմա և միշտ և յաւիտեանս  
յաւիտենից . Ամէն :

Օ. Մշ-բան-էն աղջիւ աւ Վարդապատ

Քու ամենազօր ու յաղթօղ տէրու-  
թեանդ. երկրպագութեան համար ամէն  
ծունդ կը ծռի, ու քու թագաւորու-  
թիւնդ ամենէն կը փառաւորուի : Նայէ  
մեր երկրպագութեանը ու սորվեցուր  
որ ճշմարտութեան արդարութիւնը կա-  
տարենք, քանզի դուն խաղաղութեան  
Աստուած ըլլալով մեղմէ թշնամութիւնը  
վերցուցիր և երկնի ու երկրի մէջ խա-  
ղաղութիւն ըրիր, թէ՛ հեռուն և թէ  
մերձաւորներուն քու բարեացդ նոր  
պարգևները աւետարանեցիր: Ան չնոր-  
հաց մեղալ արժանի ըրէ, և ճշմարիտ  
երկրպագողացդ հետ դասէ, ով մեր  
Աստուածը, մեր Տէրն ու Փրկիչը Յիսուս

Քրիստոս, որ օրհնեալես Հօր ու Սուրբ  
Հոգւոյն հետ հիմա և միշտ և յաւի-  
տեանս . Ամէն :

Ե. Առաջաւան ընկերուին աղջիւ

Կը գոհանանք քեզմէ, Տէր Աստուած  
մեր, որ ողորմութեանդ չնորհիւ քնոյ  
հանգատութենէն մեղարթնյուցիր: Ար-  
թընցուր մեր մտքերն ալ դէպ ՚ի քեզ,  
Տէր Աստուած մեր, որ մեր աշք'ըը  
քու փրկութիւնդ տեսնեն: Քու Աս-  
տուածութիւնդ թող գայ ու մեր քովը  
բնակի . ողորմութիւնդ ալ թող հովանի  
ու պահապան ըլլայ պաշտօնէիցդ վրայ:  
Եւ մեղ քու ծառաներդ արժանի ըրէ  
որ դիշեր ու ցերեկ և ամէն ժամ պատ-  
ուիրանացդ սիրովը մտածենք, ու գո-  
հանալով փառաւորենք Հայրդ, Որդիդ  
ու Սուրբ Հոգիդ . այժմ և միշտ ու յա-  
տեանս յաւիտենից . Ամէն :

Ը. Աստուած ընկերական աշջիւ առ Վրեմառաւ

Քրիստոս Աստուած՝ մեր Փրկիչը ,  
 կենդանարար զօրութեան ու անմահու-  
 թեան աղբիւրը դուն ես . որ գիշերն  
 ելլել ու քու իրաւանցդ և արդարու-  
 թեանդ համար խոստովանիլ չնորհե-  
 ցիր մեզի : Եւ հիմա կաղաչենք քեզի ,  
 Տէր Աստուած մեր , քու սրբոցդ հետ  
 առտուան ժամերուն մէջ մեզ արթուն  
 ու պատրաստ ըրէ , որ անոնց հետ դո-  
 հանալով փառաւորենք զքեզ Հօրդ ու  
 Սուրբ Հոգւոյդ հետ մէկտեղ հիմա և  
 միշտ ու յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

ՄՄ Հայոցիւական գրադարան



MAL026846

